ներից, 8 կուսակցութիւններից, 3 թիւրքահայ մամուլից, 6 հրաւիրեալներ և 11 խորհրդակցական ձայնով կանչուածներ: Համագումարին ներկայացուցիչ էր ուղարկել և Ամենայն Հայոց Կաթուղիկոսը: Հանդիսաւոր բացումը կատարեց Անդրանիկը, իսկ բացման խօսքը ասաց Արամը, որի ճառը թողեց խորունկ տպաւորութիւն ամենքի վրա:

Համագումարը հրաւիրուած էր միայն դաղթականական խնդիրներ լուծելու նպատակով, բայց անհրաժեշտօրէն ստացաւ նաև քաղաքական դունաւորում: Նրա հանած որոշումներն ու, մանաւանդ, ստեղծած մարմինը յետագային խաղացին խոշոր դործնական դեր արևմտահայերի կեանքում:

Համագումարը երկարօրէն զբաղուեց դաղթականական ու նպաստաբաշխման դործի քննադատութեամբ և ապագայ դործունէութեան ծրագրի մշակումով: Ի վերջոյ, ընդունուեցին հետևեալ երկու բանաձևերը, որոնցից երկրորդը, դէպքերի բնական զարդացումով, դարձաւ մի տեսակ սահմանադրութիւն:

Առաջին բանաձևը, որ առաջարկեց Վահ. Փափազեանը և ընդունուեց 51 քւէով 8-ի դէմ, արտայայտում էր համագումարի վերաբերումը դէպի դաղթականական կամ, ինչպէս այն ժամանակ ասում էին, փախստականական մարմինների անցեալ դործունէութիւնը:

Բանաձևը ասում էր. «Թիւրքահայ համագումարը լսելով պատդամաւորներու դեկուցումները և փախստականական ազդային մարմիններէ ոմանց ներկայացուցիչներու բացատրութիւնները փախստականներու օդնութեան դործի կազմակերպման և վիճակի մասին, կը նկատէ, որ փախստականներու օդնութեան դործը վարող ազդային մարմիններու դործունէութիւնը՝ չնայած անոնց նպատակներու և միջոցներու բացարձակ համանմանութեան՝ չէ ունեցած մէկ ընդհանուր ուղեղիծ և դործելակերպ, ինչպէս նաև միջոցներու ու դործերու կենտրոնացում և ներդաշնակութիւն:

Որ օդնութեան դործին մէջ տեղի են ունեցած խոշոր թերութիւններ, ինչպէս՝ անմեթոդ դործելակերպ, իրական քննթրջի բացակայութիւն, պաշտօնական կարգի անփոյթ ընտրութիւն, փախստականներու իրաւական մասնակցութիւնը չէ յարդուած, կանոնաւոր հաշուետուութեան բացակայութիւն, որոնք առիթ տուած են բազմաթիւ բողոքներու և կասկածներու:

Որ փախստականներու օդնութեան դործը ընդհանուր առմամբ նկատուած է իբր սոսկ մարդասիրական ձեռնարկ և տարուած է ըստ այնմ՝ ղեկավարելով դլխաւորապէս նպաստ տալու սկզբունքով, փոխանակ աշխատանք տալու, մինչդեռ հայածական թրքահայութեան դոյութեան պահպանման դործը պիտի նկատուէր ղերադանցապէս ազդային-հասարակական նշանակութիւն ունեցող դործ:

Միւս կողմէ, սակայն, բոլոր յիշեալ թերութիւններով հանդերձ թրքահայ համագումարը փախստականական կազմակերպութիւններու դոյութիւնը օգտակար կը համարէ հետեւեալ նկատումներով.

Որ անոնք ցարդ ձեռք բերած են դործին անհրաժեշտ փորձառութիւնը, հաստատած են կապեր և մօտէն ծանօթ են ռուս միջավայրին ու պայմաններուն:

Որ արդէն ստեղծած և ընթացք տուած են որոշ հիմնարկութիւններու:

Որ փախստականներու դոյութիւնը պահելու դործը համագումարը կը նկատէ իբր համազդային դործ. հետեւաբար անոր օդնութիւնը պիտի կատարուի բոլոր հատուածներու կողմէ հաւասարաբար, և